

Ջերմորեն ողջունում եմ «Արագիլ» վերարտադրողական բժշկության և աջակցության հիմնադրամի գործունեությունը: Բարեգործական եզակի այս նախագիծը սկսվեց իրականացվել 2011 թվականին՝ Հայաստանի առաջին տիկին Ռիտա Սարգսյանի բարձր հովանու ներքո: Ծնելիության աճի խթանումը, վերարտադրողական առողջության ոլորտում բուժօգնության բարելավումը, մատչելիության ապահովումը մեր պետության առաջնահերթություններից են, ուստի այս համատեքստում առավել և՛ս ընդգծվում է տարիների ի վեր երեխայի սպասող զույգերին փոքրիկ պարգևելու, ինչպես նաև վերարտադրողական առողջության պահպանմանն ուղղված «Արագիլ» բարեգործական հիմնադրամի գործունեության անհրաժեշտությունը: Որպես ՀՀ առողջապահության նախարար՝ ուրախությամբ եմ ուզում ընդգծել «Արագիլ» հիմնադրամի՝ առայսօր գրանցած արդյունքի մասին:

Անպտղության խնդիրն իհարկե դատավճիռ չէ, բայց դրա հաղթահարումը պահանջում է օժանդակ տեխնոլոգիաների, բուժման ժամանակակից մեթոդների կիրառում, դեղամիջոցներ, որոնք հաճախ հասանելի չեն այդ խնդիրն ունեցող շատ ընտանիքների համար: Ահա այստեղ է, որ չափազանց մեծ է «Արագիլ» վերարտադրողական և աջակցության հիմնադրամի դերը: Երեք տարիների ընթացքում հիմնադրամի աջակցությամբ լույս աշխարհ է եկել 201 երեխա. ցուցանիշը իսկապես բարձր է, ինչի շնորհիվ էլ մեծ է ազգանվեր կարևորագույն առաքելությունը ստանձնած կառույցի հանդեպ վստահությունը:

«Արագիլ» բարեգործական հիմնադրամը ձեռք է մեկնում ոչ միայն Հայաստանի, այլ նաև հայկական երկրորդ հանրապետության՝ Արցախի անպտուղ զույգերին:

Ամբողջ աշխարհում նման նախագծերի, առհասարակ մանկության հետ կապված հարցերի, նախաձեռնությունների շուրջ քաղաքակիրթ հասարակությունն իր աջակցությունն է ձևավորում: Ուրախալի է, որ մեր երկրում մի շարք բարեգործական շարժումներն առաջնորդում է ՀՀ առաջին տիկին Ռիտա Սարգսյանը, ում անձնական աջակցությամբ, կառույցի շուրջն են համախմբվել նաև կազմակերպություններ, անհատներ, որոնք իրենց ներդրումն են ունեցել երկու հարյուրից ավելի այդ ընտանիքներին երջանկացնելու գործում:

Թող Ձեր անչափ կարևոր առաքելությունը շարունակական լինի և նորանոր ընտանիքներում նորածին երեխաների ճիշեր լսվեն: